Պարոն/Տիկին _____ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ.Բաղրամյան _____

«29» փետրվարի 2024

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ.Բաղրամյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Լիանա Ազիզյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի օգնական (մամուլի քարտուղար),

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   - Շվեդիա, Ստոկհոլմ և Ուփսալա, 2024 թվականի փետրվարի 11-22-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝**
   - Շվեդիայի միջազգային համագործակցության զարգացման գործակալություն (SIDA):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցել <<Զանգվածային լրատվամիջոցների զարգացումը և ժողովրդավարական ինքնակարգավորումը նոր թվային դարաշրջանում>> խորացված միջազգային վերապատրաստման ծրագրին:

6. **Քննարկվող թեմաները (հարցերը)՝**
   - Շվեդիայի մեդիա հատվածը,
   - ԵՄ օրենսդրությունը և ԶԼՄ ինքնակարգավորման մեխանիզմը,
   - Շվեդիայի ինքնակարգավորման կառույցները,
   - Ինքնակարգավորման հիմնական գործառույները և մեխանիզմները,
   - Շվեդիայում ԶԼՄ-ների աջակցության համակարգը,

- Շվեդիայի հանրային հեռուստատեսության և ռադիոյի մասին,
- Բովանդակության մոդերացիայի գործնական կիրառումը համացանցում (META),
- Մեդիա պաշտպանի ինստիտուտը և վերջինիս գործառույթները,
- Ապատեղեկատվության դեմ պայքար,
- Հոգեբանական պաշտպանության գործակալության դերը ապատեղեկատվության դեմ պայքարում, և ինչպե՞ս է գործակալությունն աշխատում հանրության, լրատվամիջոցների և հասարակության այլ դերակատարների հետ:

Դասընթացի առաջին հատվածում մասնակիցներին մանրամասն ներկայացվել է Զանգվածային լրատվամիջոցների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմները և շվեդական փորձը: Տեսական նյութերին ծանոթանալուց հետո, մասնակիցները կատարել են խմբային քննարկումներ և առաջադրանքներ՝ ներկայացնելով իրենց երկրի մեդիա օրենսդրական կարգավորումները:

Հարցուպատասխանի ձևաչափով մասնակիցները հնարավորություն են ունեցել ստանալ անհրաժեշտ մասնագիտական տեղեկատվություն, մասնավորապես՝ ինքնակարգավորման մոդելների արդիական միջազգային փորձի մասին:

Դասընթացի երկրորդ հատվածում մասնակիցներին տրվեց առաջադրանք ներկայացնել համատեղ մշակված նախագիծ (Ներքին ինքնակարգավորման տարբերակը)՝ եռօրյա ժամկետում: Հայաստանյան խումբը ստացած տեսական գիտելիքների հիման վրա մշակեց և ներկայացրեց նախագիծ (սահիկաշար)՝ <<Հայաստանում ինքնակարգավորման տարբերակը և ինքնակարգավորման մոդելի կիրառելիությունը>> թեմայով: Նախագծում մասնավորապես առջարկվել է Հայաստանի լրատվական դաշտի համար ներդնել ինքնակարգավորման ամենաբարենպաստ տարբերակը, այն է՝ միասնական մարմնի կամ խորհրդի ձևավորումը, որը ինքնակարգավորման միջազգային ամենաընդունված ձևն է: Այն զանգվածային լրատվամիջովների քննադատության կարևոր հարթակ է: Երկրների մեծ մասում մամուլի խորհուրդները ստեղծվել են կամավոր եղանակով և բաղկացած են երեք սուբյեկտներից՝ սեփականատերեր, լրագրողներ, հանրության ներկայացուցիչներ, որոնց նպատակն է ՝պաշտպանել մամուլի ազատությունը, լրատվամիջոցների դեմ ներկայացված բողոքները քննել հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ:

Նախագծում զուգահեռաբար ներկայացվել է նաև Հայաստանում հարակից ուղղություններով անհրաժեշտ օրենսդրական քայլերը, որոնք միտված են ինքնակարգավորման մեխանիզմների ներդրմանը:

7. Հանդիպումները, ելույթները՝

- Ծրագրի շրջանակում մասնակիցները հանդիպել են Շվեդիայի Շիբստեդ (Schibsted) մեդիա գործակալության ներկայացուցիչների հետ, որոնք ներկայացրեցին իրենց մեդիա նախագծերը:
- Հանդիպում Շվեդիայի մեդիա պաշտպանի հետ:
- Ճանաչողական այց Շվեդիայի պառլամենտ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝
Դասընթացի ընթացքում որոշումներ և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Գործուղվող՝ Լիանա Ազիզյան _____
(ստորագրություն)

29.02.2024

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 040-ՀՆ, 05.02.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Հանձնաժողովի նախագահի օգնական՝ Լիանա Ազիզյան,

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը Ստոկհոլմ / Շվեդիա /

5. Գործուղման ժամկետները 11.02.2024-22.02.2024թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ <u>ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն</u>*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս , գիշերավարձ և օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Լիանա Ազիզյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

26.02.2024թ.